ՄԻ.

Հայ ճարտարապետի մը գլխուն հանդիպածը Մուստաֆա Գ.ի։

Գերամեծար գերյարգելի Աբբայհօր մերոյ և քաջահմտապետի
տեառն տեառն Ստեփաննոս վարդապետի, ողջոյն

... Յօգոստոս 11 յաւուր շաբաթու, գնաց թագաւորն ալայով ի պէպէք. բազում ահիւ և դողութեամբ և սասանմամբ ժողովրդեանն ի ճանապարհին։ Եւ նստեալ ի պէպէք, ետես զտուն մի առ ծովեզերբն ի ղանտիլլին՝ մթին կարմիր ներկով, (զի ղանտիլլի գեղն է յանդիման պէպէկին)։ Եւ զայն տուն շինեալ է չէկ սիմոն խալվան, որ էր ճարտարապետ էէնի ճամիին, զոր շինեաց սուլթան մահմուտն։ Քանզի սուլտան մահմուտն, և զկնի նորա սուլթան օսմանն՝ շնորհեալ էին նմա զայն տեղին վասն ճարտարապետութեան նորա։ Արդ՝ տեսեալ զայն տունն՝ ասէ թագաւորն. ո՞յր է այն տունն։ Ասեն. սիմոն խալֆային է։ Ասէ թագաւորն. զի՞ բնակեալ է կեավուրն ի մէջ տաճկաց։ Առաքեսցէ զբանալիս տանն։ Եւ վաղվաղակի աղդեալ տանուտեառն, դատարկացոյց զտունն. և գնաց նստաւ յօրթաքեօյ ի կարմիր տունն, որ հայր ի պօստանն չէօհրէթ օղլուին. և զտունն ղանտիլլին վաճառելոց է։ Ասեն ոմանք, թէ թագաւորն ասացեալ է ցպօստանճի պաշին, թէ տուր 15 քսակ և առ զուէ։ Բայց տանուտէրն կամի վաճառել 18 քսակ։ Արդ մեծամեծքն յունաց՝ որ կամէին շինել զնոր տուն և կամ նորոգել, դադարեցան ի բաղձանաց իւրեանց. և բազումք ի նոցանէ երկնչին ելանել արտաքս համարձակ, մանաւանդ կանայք նոցա։

Դարձեալ ել հրաման յարքայէն՝ ոչ չրջիլ սուկ կարմիր ֆէսով. և սաստկացոյց զհին հրամանն, թէ լռայէին մի՛ վաճառեսցեն զծառայ կամ զաղախին։... Յետրենէ եղեալ է մեծ հրկիզութիւն, և այրեցեալ բովանդակ չարշըն. այլ ապարանք թագաւորին ոչ այրեցան, զի հեռի են ի չարշըն։ Սարգիս վրդ.ն եկն ի կոստանդնուպօլիս։ Լուայ ասէն թէ ի Լեհաստան մեծ բազմութիւն հրէից դարձեալ են ի քրիստոնէական հաւատս. զի ի միջի իւրեանց վիճաբանեալ, ստուգեալ են թէ եկեալ է մեսիայն, զի անցեալ է ժամանակ գալստեան նորա։...

Գրեցաւ ի առնաւուտ զեղն — *Ն. Ծ. Հ. Յակոբոս վրդպտ. Ջամչեանց. Մխիթարեան*
1759 *յօգոստոսի* 18

ՄԻԱ.

Մէկ քանի տեղեկութիւններու հետ սուլթանական խստութիւններ կը ծանուցուին հետևեալ երկու վաւերաթղթերուն մէջ։

Ա.

Գերամեծար գերյարգելի Աբբայ հօր մերոյ Ստեփաննոսի վրդ.ի ողջոյն

Թուղթ ՃԺԳ

... Սառաֆօղլու սարգիս վարդապետն եկն ի պաւոսայ, և այժմ յստամպօլ է. և զկնի քսան աւուրց գնալոց է ի թօխաթ ի մանուսայն իւր. տեսի զնա, և երկարս խօսեցայ ընդ նմա. և սիրով ընկալաւ զիս. և ձեզ ևս մանաւանդ Հ. Մկրտչին զողջոյն սիրոյ մատուցանէ։ Վասն քեռորդւոց նորա պետրոսին խօսեցայ և ընդ սարգիս վարդա-